1877—1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼԾԻՑ

Պատմ. գիտ. դոկտոր Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

Բուլղար ժողովուրդը, որ XIV դարում ընկավ ֆեոդալական-բռնապետական Թուրքիայի արյունոտ լծի տակ, մշտապես հերոսական պայքար էր մղում թուրք ջարդարարների դեմ՝ ազատության և իր պետականության վերականգնման համար։ XIX դարի 60—70-ական թթ. բուլղարների պայքարը համազգային բնույթ էր կրում. պայքարի հիմնական շարժիչ ուժն էր դյուղացիությունը և նրան հարած մանր ու միջին բուրժուազիան։ Բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գլխավորում էին մեծ հայրենասերներ, ականավոր հեղափոխական-դեմոկրատներ Գեորգի Ռակովսկին, Վասիլ Լևսկին, Լյուբեն Կարավելովը, Խրիստո Բոտևը և ուրիշներ։ Նրանք գտնվում էին ռուս հեղափոխական-դեմոկրատներ Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի ազդեցության տակ։ Թուրքական բռնակալությունից Բուլղարիայի ազատագրումը բուլղար հեղափոխականները կապում էին Ռուսաստանի հետ։ «Ռուսաստանը,— գրել է Խրիստո Բոտևը,— երբեք չի հրաժարվի մեզանից և երբեք թույլ չի տա մյուս ժողովուրդներին ոտնակոխ անել սլավոնների անունը»[1]։

Թուրքական լծի դեմ բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բարձրակետը 1876 թ. Ապրիլյան հերոսական ապստամբությունն էր, որը բռնկեց ապրիլի 20-ին։ Ապստամբության ղեկավարությունը ստանձնեց Գեորգի Բենկովսկին։ Մի քանի օր անց շարժումը ընդգրկեց զգալի տարածություն Բուլղարիայի հյուսիսում ու հարավում, Ստարա Պլանինայից մինչև Ռոդոպների լանջերը։ Ստամբուլում Ռուսաստանի դեսպան, գեներալ Ն. Պ. Իգնատևը Ալեքսանդր II-ին ուղղված զեկուցագրում ընդգծում էր, որ ատելի թուրքական լուծը թոթափելու ցանկությունը «գնալով ավելի ու ավելի բացահայտ է դառնում և միայն նյութական միջոցների բացակայությունն է, որ մինչև հիմա կասեցնում է բռնկումը... Այժմ երկրի բոլոր կողմերից տագնապալի լուրեր են ստացվում։ Ապստամբները արդեն շատ ժամեր տևող ճակատամարտ են տվել օսմանյան զորքերին։ Բուլղարիայի բոլոր այն վայրերում, ուր կան թուրքեր, կոտորածի վտանգ ու վախ է առաջանում։ Դրությունը շատ լարված է»։ «Իրերի ներկա վիճակում,— եզրափակում է Իգնատեվը,— արդեն ո՛չ ռեֆորմները, ո՛չ մասնակի բարեփոխումները չեն կարող վերականգնել խաղաղությունը Բալկանյան թերակղզում։ Համընդհանուր պոռթկումը սպառնում է ընդգրկել այն ամբողջությամբ»[2]։ Ապրիլյան ապըս-

---

[1] Христо Ботев, Публицистика, М., 1952, էջ 57.

[2] «Освобождение Болгарии от турецкого ига», Сборник документов, т. I, М., 1961, док. № 97, էջ 204։

տամբությունը բուլղար ժողովրդի ամենամասսայական և կազմակերպված ելույթն էր։ Ապստամբները հերոսաբար, մինչև արյան վերջին կաթիլը կռվում էին մինչև ատամները զինված թշնամու գերակշիռ ուժերի դեմ։

Թուրքական հրոսակների դեմ վերջին մարտը վարողը 120 հոգուց բաղկացած մի ջոկատ էր մեծ բանաստեղծ և հրապարակախոս Խրիստո Բոտևի գլխավորությամբ, որը զոհվեց մայիսի 20-ի գիշերային մարտում[3]։ Դա ապստամբների վերջին ընդհարումն էր թուրք բաշիբոզուկների հետ։ Ստրաշիմիրովը, նկարագրելով Վոյնովսկու գլխավորած 40 հոգուց բաղկացած բոտևյան մի ջոկատի պայքարը, նշում է. «Վոյնովսկու և նրա երիտասարդ ընկերների հետ դադարեց վերջին ալիքը մոլեգնած, վեհապանծ ու բանաստեղծական այն օվկիանոսի, որ մեր պատմության մեջ հայտնի է Ապրիլյան ապստամբություն անունով և որը հավիտյանս կմնա որպես մեր ժողովրդական դյուցազնամարտի ամենապայծառ էջերից մեկը»[4]։

Բուլղար ժողովրդի Ապրիլյան զինված ապստամբությունը ճնշվեց ամենադաժան կերպով։ Բուլղարիայի 30 հազար խաղաղ բնակիչներ թուրքական հրոսակների գազանությունների զոհը դարձան։ Հարյուրավոր գյուղեր ու ավաններ ջնջվեցին երկրի երեսից։ Թուրքական զորքի գազանությունների մասին շատ վավերագրեր են հրապարակվել։ Դրանցից մեկում կարդում ենք. «Զինվորական և քաղաքացիական իշխանությունների կարգադրությամբ. ապստամբությունը ճնշելու պատրվակով, Ֆիլիպուպոլսի, Տըրնովոյի և մյուս շրջաններում կանոնավոր և անկանոն զորքերը հարձակվեցին խաղաղ բնակիչների վրա նրանց բնաջնջելու և տներն ավերելու համար, որի հետևանքով հարյուրից ավելի բուլղարական աշքի ընկնող գյուղեր ու ավաններ թալանվեցին ու ավերակ դարձան, իսկ բնակչությունը, առանց սեռի և տարիքի խտրության, սրի քաշվեց ու արտաքսվեց, ըստ որում շատ կանայք ու երեխաներ անարգվեցին և վաճառվեցին ստրկության»[5]։

Ռուսաստանի ու Եվրոպայի առաջադեմ հասարակայնությունն իր բողոքի ձայնը բարձրացրեց թուրքական գազանությունների դեմ։ Ռուսական բոլոր թերթերը հոդվածներ էին տպագրում Բուլղարիայում թուրքերի գործած բարբարոսությունների մասին և պահանջում, որ կառավարությունը ավելի վճռական միջոցներ ձեռնարկի Թուրքիայի դեմ։ Թուրքական գազանությունների առիթով իրենց ցասումնալից ձայնը բարձրացրեցին ռուս գրողներ Ի. Ս. Տուրգենևը, Լ. Ն. Տոլստոյը, Ֆ. Դ. Դոստոևսկին, նկարիչներ Ի. Ե. Ռեպինը, Վ. Վ. Վերեշչագինը, ռուս մեծ գիտնականներ Դ. Մ. Մենդելեևը, Ի. Մ. Սեչենովը և ուրիշներ։

---

[3] Խոսելով Խրիստո Բոտևի, որպես պանծալի ազգային հերոսի մասին, Գեորգի Դիմիտրովն ընդգծել է. «Հանճարեղ բանաստեղծը... անցյալ դարի բուլղարական ազգային-ազատագրական պայքարի ամենատաղանդավոր և ամենահեռատես առաջնորդն էր... Բուլղար ժողովրդի համար նա եղել է մնում է որպես ամենավսեմ օրինակը։ Հավերժ փառք մեծ, և մինչև օրս ոչ մի բուլղարացու կողմից չգերազանցված Խրիստո Բոտևին, որը շարունակում է ապրել և կապրի բոլոր բուլղար հայրենասերների սրտերում» (Н. С. Державин, История Болгарии, ч. IV. М.—Л., 1948, էջ 176)։

[4] Д. Т. Страшимиров, История на Априлското възстание, т. III, Пловдив, 1907. էջ 317։

[5] «Освобождение Болгарии от турецкого ига», т. I, док. № 210, էջ 337։

Թուրքիայի դեմ Սերբիայի ու Չերնոգորիայի պատերազմի և Բուլղարիայի Ապրիլյան ապստամբության օրերին Ռուսաստանի ժողովրդական մասսաները նյութական մեծ օգնություն էին ցույց տալիս իրենց սլավոն եղբայրներին։ Շատերը օժանդակում էին ոչ միայն դրամով, մթերքներով ու հագուստով, այլև որպես կամավորներ մասնակցում էին թուրքական լծի դեմ սլավոն ժողովուրդների մղած զինված պայքարին։

Պետերբուրգի նահանգային ժանդարմական վարչության պետ, գնդապետ Բիրևեր, 1876 թ. հոկտեմբերի 25-ին, հարավային սլավոնների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ նահանգի բնակչության տարբեր դասակարգերի ունեցած վերաբերմունքի մասին III բաժանմունքին գրում էր. «Կարելի է հաստատապես ասել, որ համակրանքը հարավային սլավոնների հանդեպ լիակատար է և առավել բացահայտորեն է արտահայտվում հասարակ... դասակարգի մոտ. յուրաքանչյուր գյուղացի պատրաստ է տալ վերջին ունեցվածքը, միայն թե օգնի իր հավատակիցներին... նրանք պատրաստ են ամեն զոհողության, միայն թե ազատեն իրենց հավատակիցներին նրանց կրած տանջանքներից և աղետներից»[6]։

Ապրիլյան ապստամբությունը լայնորեն լուսաբանվել է նաև հայ պարբերական մամուլի էջերում և բուռն արձագանք գտել հայ հասարակության լայն շրջաններում։

Ապրիլյան ապստամբությունը թեև պարտվեց, բայց անհետևանք չանցավ։ Բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը շարունակվում էր նոր՝ պատերազմական պայմաններում։ Ռումինիան, Սերբիան դարձան Ապրիլյան ապստամբության պարտությունից հետո Բուլղարիայից հեռացած բուլղար հայրենասերների հավաքատեղի։ Նրանցից հավաքագրվեցին բուլղարական առաջին վեց դրուժինաները, որոնք կազմեցին 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցած բուլղարական աշխարհազորի հիմնական կորիզը։

Ռուսաստանի ու Եվրոպայի առաջադեմ հասարակական ուժերը պահանջում էին վերջ տալ թուրք վանդալների միջնադարյան վայրագություններին Բալկաններում։ 1876 թ. վերջին և 1877 թ. սկզբին Ռուսաստանի նախաձեռնությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվում է վեց տերությունների կոնֆերանս, որը մշակում է ռեֆորմների նախագիծ, համաձայն որի Բ. Դուռը պետք է ինքնավարություն տար Բուլղարիային, Բոսնիային և Հերցեգովինային։ «Սակայն դեսպանների Կոստանդնուպոլսի կոնֆերանսը ռեալ արդյունքներ չտվեց այն պատճառով, որ Անգլիան գաղտնի պաշտպանում էր Բ. Դռանը ընդդեմ Ռուսաստանի։ Օգտագործելով մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները, Թուրքիան, հենվելով Անգլիայի օժանդակության վրա, մերժեց տերությունների նոր առաջարկը»[7]։

Բալկաններում թուրքական իշխանությունների կողմից շարունակվող սանձարձակությունն ու կամայականությունները Ռուսաստանին հարկադրեցին կրկին արծարծել բալկանյան հարցը։ Ցարական իշխանության պնդմամբ վեց մեծ տերությունների ներկայացուցիչները 1877 թ. մարտին Լոնդոնում ստորագրեցին ռեֆորմների նոր նախագիծ Օսմանյան կայսրության քրիս-

---

6 Նույն տեղում, վավ. № 325, էջ 464։

7 «История Болгарии», т. I, М., 1954, էջ 297։

սոնյա ժողովուրդների և, մասնավորապես, բուլղարների համար։ Սակայն Բ. Դուռը, դարձյալ օգտագործելով մեծ տերությունների միջև եղած հակասությունները, մերժեց այս նախագիծը ևս։ Այս մերժումը որպես առիթ օգտագործելով, 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը Թուրքիային պատերազմ հայտարարեց։ «Սլավոն եղբայրներին պաշտպանելու» լոզունգի տակ պատերազմի մեջ մտնելով, ցարական կառավարությունը ջանում էր ամրապնդել 1853—1856 թթ. պատերազմում կրած պարտության հետևանքով թուլացած իր քաղաքական և ստրատեգիական դիրքերը Բալկաններում ու Մերձավոր Արևելքում։ Անգլիան, Ավստրո-Հունգարիան, Գերմանիան ինչպես բուլղարների Ապրիլյան ապստամբության, այնպես էլ սկսած պատերազմի ժամանակ գաղտնի օժանդակում էին Օսմանյան կայսրությանը։

Վասիլ Կոլարովը, խոսելով Ռուսաստանի ու եվրոպական տերությունների արևելյան քաղաքականության մասին, ընդգծել է. «Պատմական ճշմարտությունը միշտ որոշակի է, իսկ տվյալ դեպքում դա այն է, որ ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը օբյեկտիվորեն համընկնում էր Մերձավոր Արևելքի առաջադիմական զարգացման գծի հետ, մինչդեռ եվրոպական տերությունների արևելյան քաղաքականությունը ստոգորված էր պահպանողականության ոգով, ձգտում էր պահպանել նեխած Օսմանյան կայսրության ամբողջականությունը և թշնամաբար էր տրամադրված արթնացող, կենսունակ և առաջադեմ բալկանյան ազգերի նկատմամբ»[8]։ Հենց սրանով են բացատրվում այն ջերմ վերաբերմունքն ու օգնությունը, որ ցույց էին տալիս բալկանյան ժողովուրդները ռուսական բանակին, քանի որ այդ պատերազմում Ռուսաստանի տարած հաղթության մեջ նրանք տեսնում էին իրենց լիակատար ազատագրումը հինգ դար տևած ռազմաֆեոդալական, բռնապետական թուրքական լծից։

Բուլղարական աշխարհազոր ստեղծելու հարցը վճռվել էր Ալեքսանդր II-ի ներկայությամբ, 1876 թ. հոկտեմբերի 3—4-ին Լիվադիայում կայացած խորհրդակցությունում, որտեղ նախապես քննարկվում էր ապագա պատերազմի ծրագիրը։ Բուլղարական աշխարհազորն օգտագործելու կապակցությամբ ռուսական հրամանատարությունը երկու կարծիք ուներ։ Սկզբում ենթադրվում էր, որ բուլղարական աշխարհազորը կայազորային ծառայություն կկատարի ռուսական բանակի կողմից գրավված քաղաքներում և կօգտագործվի բացառապես թիկունքի օժանդակ ծառայության մեջ։ Սակայն աշխարհազորայինների հայրենասիրական ոգևորությունը, ռուս զինվորների հետ միասին հայրենիքի ազատագրման համար մղվող մարտերին մասնակցելու ջերմ ցանկությունը, ռուս սպաների ղեկավարությամբ նրանց հաջող մարտական նախապատրաստությունը աշխարհազորի հրամանատար գեներալ Ն. Ռ. Ստոլետովին հնարավորություն տվեցին հասնել այն բանին, որ 1877 թ. նոյեմբերի 18-ին բուլղարական վեց դրուժինան էլ, թվով մոտ 6 հազար մարդ, մտցվեցին Դանուբյան բանակի՝ գեներալ Գուրկոյի գլխավորած Առաջատար չոկատի կազմի մեջ[9]։

---

[8] «За нерушима българско-съветска дружба», София, 1961, էջ 216։

[9] «Освобождение Болгарии от турецкого ига», Сборник документов, т. II, М., 1964. док. № 2. էջ 19։

Ռուս և բուլղարացի զինվորների միաձուլությունը երևան եկավ շատ շուտով։ Աշխարհազորի սպաներից մեկի, ազգությամբ բուլղարացի, Կիսովի հիշողություններում նշվում է, որ արշավանքի ամենասկզբում, ռուսական զորամասերի և բուլղարական ջոկատների հանդիպումների ժամանակ «աչքի էր զարնում ռուս զինվորների ջերմ վերաբերմունքը դեպի աշխարհազորայինները»[10]։

Բուլղարական աշխարհազորի շտաբի պետ Ռինկևիչը, նկարագրելով Գուրկոյի Առաջատար ջոկատի և բուլղարական աշխարհազորի երթը Դանուբից մինչև Բալկաններ, գրում է. «Չէր կարելի չզարմանալ, թե ինչպես այդ նորաստեղծ աշխարհազորը, կազմավորումից երեք ամիս հետո, բացահայտեց իրեն որպես իսկական, հին, կանոնավոր բանակ, որը կարող էր օրինակ ծառայել մարտական կյանքի պրկանքները կրելու մեջ և որը արագորեն ու հեշտությամբ, բուլղարների բնավորության շնորհիվ, յուրացրեց հրամանատարների հանդեպ ունեցած վստահությունն վրա հիմնված կարգապահությունը, որը աշխարհազորայիններին հարկադրում էր անտրտունջ և համբերությամբ դիմանալ պատերազմական ժամանակների բոլոր դժվարություններին և ուղարկում էր նրանց մարտի, ինչպես ուրախ տոնի»[11]։

Ինքը, Առաջատար ջոկատի հրամանատար գեներալ Գուրկոն Խալենքյոյի լեռնանցքը անցնելիս ռուս զինվորների և բուլղար աշխարհազորայինների ցուցաբերած հերոսության մասին գրել է. «Միայն ռուս զինվորը կարող էր երեք օրում հաղթահարել այդպիսի դժվարանցանելի կիրճը և տեղափոխել դաշտային հրանոթները։ Արդարությունը պահանջում է ասել, որ անցման դժվարությունները հաղթահարելու գործում բուլղար աշխարհազորայինը ամենևին չէր զիջում մյուս զինվորներին»[12]։

Թեև պատերազմը հայտարարվել էր ապրիլի 12-ին, սակայն երկաթուղիների փոքր թողունակության պատճառով զորքի տեղափոխումը դեպի պատերազմական գործողությունների վայրը ձգձգվում էր, այդ պատճառով էլ ակտիվ գործողությունները Բալկանյան ռազմաճակատում սկսվեցին հունիսի վերջին միայն։ Ինչ վերաբերում է Կովկասյան ռազմաճակատին, ապա այստեղ պատերազմական գործողություններն սկսվեցին ապրիլի 12-ին։ Այդ օրը ռուսական Կովկասյան բանակը մտավ Արևմտյան Հայաստանի սահմանները և գրավեց Արդահանը։ Բուլղարների նման հայերն էլ սկսված ռուս-թուրքական պատերազմի մեջ էին տեսնում իրենց փրկությունը դարավոր թուրքական լծից։

Հայկական թերթերը հիացմունքով էին գրում քաջարի ռուսական բանակի մասին, որը արյուն էր թափում Բալկաններում՝ սլավոնների և Փոքր Ասիայում՝ հայերի փրկության համար[13]։

Պատերազմն ասես մի կողմ էր մղել Բուլղարիան Հայաստանից բաժանող լեռները, հովիտները, գետերն ու ծովերը, նրանց տեղը զիջելով հայ և բուլղար ժողովուրդների մարտական սերտ համագործակցությանը։ Նրանք

---

10 К. И. Кисов, Из боевой и походной жизни 1877—1878 гг., София, 1903, էջ 72։

11 Е. Е. Рынкевич, Записки о болгарском ополчении, «Военный сборник», 1902, № 4, էջ 57։

12 Д. Нагловский, Передовой отряд в последнюю турецкую кампанию, СПб., 1891, էջ 5—6։

13 Տե՛ս «Մշակ», 1877, № 52։

ռուս զինվորների հետ ուս-ուսի տված մարտի էին գնում, արյուն էին թափում, կիսում էին հաջողությունների ուրախությունն ու անհաջողությունների դառնությունը։

Պատերազմում իր դաշնակից Ռումինիայի տերիտորիայից ռուսական բանակը հաջողությամբ անցավ Դանուբը և գրավեց Սվիշտովը՝ առաջին քաղաքը Բուլգարիայի տերիտորիայում։ Ռուսական բանակի առաջխաղացումը դեպի Դանուբ ուրախացնում էր այդ երկրամասի սլավոններին, որոնք միաբերան երջանկություն և լիակատար հաջողություն էին մաղթում թուրքական լծի տակ հեծող սլավոնների համար մարտնչող ռուսական բանակին[14]։

Բուլգարիայում ռուսական բանակի գործողություններն ուղեկցվում էին բուլգար ժողովրդի զինված ազգային-ազատագրական պայքարով։ Ռուսական բանակի շարքերում կռվում էին բուլգարացի աշխարհազորայինները։ Պատերազմի ընթացքում ազատագրված շրջաններում ստեղծվում էր ժողովրդական միլիցիա, մերձճակատային գոտում և թշնամու թիկունքում գործում էին բուլգարական չետաները (պարտիզանական ջոկատները)[15]։

Սվիշտովի ազատագրումից հետո ռուսական զորքերը շարժվեցին արևելք՝ դեպի Ռուսչուք (Ռուսե) և արևմուտք՝ դեպի Նիկոպոլիս, իսկ Դանուբյան բանակի Առաջատար ջոկատը շարժվեց հարավ։ Հունիսի 25-ին Գուրկոյի ջոկատը, որի մեջ մտնում էր նաև բուլգարական աշխարհազորը, ազատագրեց Բուլգարիայի հնագույն մայրաքաղաք Տրրնովոն։

Տրրնովոյից հետո Գուրկոյի ջոկատը, մարտերով դեպի հարավ շարժվելով, ազատագրեց մի շարք բնակավայրեր ու քաղաքներ, այդ թվում նաև Կազանլիկը, որին հաջորդեցին Ենի-Զագրան, Էսքի-Զագրան և Կալոֆերը։ Այս քաղաքների գրավման ժամանակ բուլգար աշխարհազորայինները չտեսնված հերոսություն ցուցաբերեցին։ Աշխարհազորի հրամանատար, գեներալ Ստոլետովը գրում է. «Էսքի-Զագրայի մոտ մղված մարտը ցույց տվեց, որ բուլգարները կարող են կռվել և մեռնել ինչպես հերոսներ»[16]։

Հուլիսի 7-ին, Սուլեյման-փաշայի զորքերի կատաղի գրոհները ետ մղելով, ռուսական Առաջատար ջոկատը և բուլգարական աշխարհազորը գրավեցին Շիպկան և Շիպկայի լեռնանցքը։ Կոտորածից փրկվելու համար բուլգար բնակչությունը, բնակավայրերը լքելով, շարժվում էր հարավից հյուսիս, ռուսական զորքերից պաշտպանություն հուսալով։

Օգոստոսի 8-ին Սուլեյման-փաշան իր 30-հազարանոց բանակով հարձակվեց Շիպկայի լեռնանցքի վրա, նպատակ ունենալով դուրս մղել այնտեղից ռուսական զորքերն ու բուլգարական աշխարհազորը և ներխուժել Հյուսիսային Բուլգարիա։ Սակայն Շիպկայի պաշտպաններն իրենց փոքրաթիվ ուժերով հերոսաբար ետ էին մղում թուրքական զորքերի բոլոր գրոհները։ Նկարագրելով Շիպկայի օգոստոսի 9-ի մարտերը, գեներալ Դերոժինսկին նշել է. «Զորքերի վարքագիծն իսկապես հերոսական է, օգոստոսի 9-ին ետ է մղվել 10 գրոհ, թշնամին մշտապես կռվի մեջ էր մտցնում թարմ ուժեր... Դրուժինաները քիչ փամփուշտ ունեն և հրացանների մեծ մասը փչացել է»[17]։

---

14 «Освобождение Болгарии от турецкого ига», т. II, док. № 11, էջ 26։

15 «История Болгарии», т. I, էջ 303։

16 «Освобождение Болгарии от турецкого ига», т. II, док. № 212, էջ 248—249։

17 «Сборник материалов по истории русско-турецкой войны», вып. 36, СПб., 1902, էջ 177։

Օգոստոսի 11-ին Սուլեյման-փաշայի զորքերը, թարմ ուժերով համալրված, կրկին հարձակվեցին Շիպկայի պաշտպանների դիրքերի վրա։ Հարձակումը տարվում էր միաժամանակ երեք ուղղությամբ՝ հարավից, արևմուտքից և արևելքից։ Թուրքական ուժերի գերակշռությունը դրեթե քառակի էր։ «Աշխարհազորայինները, գրում է մարտերի մասնակիցներից մեկը, թշնամուն դիմավորեցին քարե կարկուտով՝ համազարկերի փոխարեն։ Տեղանքը նպաստում էր դրան, քարերն էլ առատ էին»[18]։

Շիպկայի հերոսները վճռեցին կռվել մինչև վերջին զինվորը։ Նրանք համարյա շրջապատված էին Սուլեյման-փաշայի զորքերի կողմից, զուրկ էին ջրից, չունեին զինամթերք։ Դեպի աղբյուրը տանող ճանապարհը ծածկված էր Շիպկայի հերոսների դիակների խիտ շղթայով։ «Մենք ուղարկում էինք ջրի,— գրել է ինքը՝ Ստոլետովը,— որը հավասարազոր էր գնդակահարության ուղարկելուն»[19]։ Այսպիսի ծանր պայմաններում Շիպկայի պաշտպանները պահեցին իրենց դիրքերը մինչև օգոստոսի 12-ը, մինչև օժանդակ ուժերի գալը։ Շիպկայի լեռնանցքը պաշտպանող զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 15 հազար մարդու, որոնց տրամադրության տակ կար 36 հրանոթ։ Ռուսական զորքերի և բուլղար աշխարհազորայինների հակագրոհների հետևանքով թուրքական զորքերը մեծ կորուստներ կրեցին և նահանջեցին։ Կատաղի կռիվները շարունակվեցին մինչև օգոստոսի 14-ը, որից հետո թուրքական բանակի գրոհները դադարեցին։ Շիպկայի համար մղված մարտերում թուրքերը կորցրեցին 6,5 հազար մարդ, սպանված և վիրավոր, ռուսներն ու բուլղարները՝ շուրջ 3700։ Չորս ամիս շարունակ, ձմեռային դաժան պայմաններում, ուժեղ սառնամանիքներին ռուսներն ու բուլղարները, թուրքական բանակի անընդհատ կրակի տակ պահում էին իրենց դիրքերը։

«Օգոստոսյան արյունահեղ մարտերը տևեցին միայն վեց օր, բայց այդ կարճ ժամանակամիջոցում ըստ էության վճռվեց 1877—1878 թթ. ողջ կամպանիայի ելքը։ Շիպկայի ռուս և բուլղարացի հերոսները թույլ չտվեցին թշնամուն անցնել Հյուսիսային Բուլղարիա և դրանով զրկեցին թուրքերին Պլևնայում ամրացած Օսման-փաշայի զորքերին օգնելու հնարավորությունից։ Այդ մարտերում Շիպկայի պաշտպանները ցուցաբերեցին չտեսնված հերոսություն, քաջություն և արիություն։ Նրանք թշնամուն հաղթելու մեծ կամք ցուցադրեցին։ Նրանց թափած արյունը ընդմիշտ զոդեց ռուս-բուլղարական բարեկամությունը և ամրապնդեց բուլղարների հավատը ռուս ժողովրդի անխորտակելի ուժի նկատմամբ»[20]։

Ծանր ու արյունոտ կռիվներ էին գնում Պլևնայի համար։ Ռուսական և ռումինական զորքերը, բուլղար աշխարհազորայինների աջակցությամբ, մի քանի անգամ փորձեցին թուրքական զորքերը դուրս մղել Պլևնայի ամրացված դիրքերից։ Մարտերը շարունակվեցին հինգ ամսից ավելի. 1877 թ. հուլիսից մինչև դեկտեմբեր։ Դաշնակից զորքերին և բուլղարական աշխարհազորին հաջողվեց լիովին շրջապատել հակառակորդի դիրքերը և

---

[18] П. К. Фортунатов, Боевой русско-болгарский союз в войне 1877—1878 гг., сб. «Освобождение Болгарии от турецкого ига», М., 1953, էջ 61։

[19] Л. Соболев, Выручка Шипкинского гарнизона. Из воспоминаний очевидца. «Сборник военных рассказов, составленных офицерами-участниками войны 1877—1878 гг.», т. I, էջ 230։

[20] П. К. Фортунатов, Նշվ. աշխ., էջ 63։

Օսման-փաշայի 34-հազարանոց բանակին ստիպել հանձնվել։ Պլևնայի անկումը շրջադարձային պահ էր պատերազմի ընթացքում։ Ռուսական Դանուբյան բանակը հարձակման անցավ Բալկաններից այն կողմ։ Շեյնովո գյուղի մոտ Վեսսել-փաշայի զորքերը շրջապատվեցին և գերի վերցվեցին։ Շարունակելով հարձակումը, հակառակորդի դեմ համառ մարտեր մղելով ռուսական զորքերը ետ շպրտեցին թշնամուն և գրավեցին Սոֆիան, Ֆիլիպուպոլիսը, իսկ 1878 թ. հունվարի 8-ին՝ Ադրիանուպոլիսը։ Իր հաղթական երթը շարունակելով, ռուսական բանակը մոտեցավ Օսմանյան կայսրության մայրաքաղաք Ստամբուլի մերձակա մատույցներին։

Ռուսական բանակի հաղթական առաջխաղացումը փրկեց հաղարավոր բուլղարացիների կյանքը և մեծ վերելք առաջացրեց բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական շարժման մեջ։ Ռուսական բանակի առաջապահ զորամասերը, զինաթափելով թուրքական ջոկատներն ու թուրք ժանդարմներին, զինում էին բուլղար գյուղացիներին։ Շատ շրջաններում բուլղարներն իրենք էին կինվում և պաշտպանում իրենց գյուղերը թուրքական զորամասերի ու ժանդարմների հարձակումներից, սպասելով ռուսական զորամասերին և բուլղար աշխարհազորայիններին։ Բուլղար գյուղացիները գրավում էին նահանջող թուրքական բանակի հետ փախած թուրք կալվածատերերի հողերը և, այդպիսով, Բուլղարիայի ազատագրված շրջաններում հենց պատերազմի ընթացքում վերացվեց թուրքական ֆեոդալական հողատիրությունը։ Բուլղարիան կանգնեց կապիտալիստական զարգացման ուղու վրա։ Խոսելով ռուս-թուրքական պատերազմի առաջադիմական նշանակության մասին, Վ. Կոլարովն ընդգծել է, որ այն «ոչ միայն ազատագրեց Բուլղարիան քաղաքականապես, այլև ամրապնդեց և ավարտեց նրա ընդերքում տեղի ունեցող սոցիալական հեղափոխությունը»[21]։

* * *

Կովկասյան ճակատում, գրավելով գրեթե ողջ Արևմտյան Հայաստանը, ռուսական բանակը մոտեցավ նրա գլխավոր քաղաք Էրզրումին։ Ռուսական Կովկասյան բանակի հաղթանակների գործում քիչ դեր չխաղացին Արևելյան և Արևմտյան Հայաստանի հայ ժողովրդական մասսաները։ Հազարավոր հայեր, զենքը ձեռքներին կռվում էին թուրքերի դեմ ինչպես ռուսական բանակի կանոնավոր զորամասերում, այնպես էլ կամավորական ջոկատներում և պարտիզանական խմբերում։ Արևմտահայերը, բալկանյան ժողովուրդների նման, հանձին ռուսական զորքերի տեսնելով իրենց ազատարարներին, նրանց համար չէին խնայում ո՛չ ուժ, ո՛չ միջոցներ։

Կովկասի փոխարքան, Կովկասյան բանակի հրամանատարության տրվյալները վկայակոչելով, հեռագրում էր Ալեքսանդր II-ին, որ «մեր գրաված ողջ երկրամասի (իմա՝ Արևմտյան Հայաստանի—Ե. Ս.) բնակչության հնազանդությունն ու մեզ ծառայելու պատրաստակամությունը գերազանցում է բոլոր սպասելիքները. Կարսի փաշայության բնակիչներից՝ մեզ մոտ ծառայության մտնելու մասին խնդրողների քանակն այնքան մեծ է, որ գեներալ ադյուտանտ Լորիս-Մելիքովը խիստ անհրաժեշտ է համարում հենց այժմ ձեռ-

21 «Речь председателя Великого Национального Собрания В. Коларова «О проекте конституции», София, 1947, էջ 7։

նարկել իռեգուլյար հեծյալ գնդի կազմավորումը, որի համար նրան թույլտվություն եմ տվել»[22]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի անմիջական մասնակիցներից մեկը՝ գեներալ-մայոր Ս. Քիշմիշևը գրել է, որ այն մեծ հույսերը, որ ռուսական հրամանատարությունը կապում էր Փոքր Ասիայի հայ բնակչության հետ, լիովին արդարացան. «...եթե պետք էր լինում հավատարիմ ուղեցույց, կամ որևէ գաղտնի գրություն ուղարկելու անհրաժեշտություն էր ծագում, միշտ գտնվում էին հայեր, որոնք բարեխղճորեն կատարում էին այդ հանձնարարությունները։ Կարսի գրոհի գիշերը երեք գլխավոր շարասյուների ուղեցույցները հայեր էին։ Սրանք զինվորի շինել էին հագել և գրոհի ժամանակ գնում էին առջևից»[23]։

Հայկական միլիցիայի 850 հոգիանոց մի ջոկատ, հավաքագրված Ղարաբաղի և Գանձակի հայերից, որի հրամանատարներն էին Գրիգոր Շահնազարյանցն ու Համբարձում Հախումյանը, մայիսի 5-ին Սուրմալուի վրայով շարժվեց դեպի թուրքերի կողմից պաշարված Բայազետի բերդը, որի միջնաբերդում ամրացած փոքրիկ կայազորը, կապիտան Շտոկվիչի հրամանատարությամբ, 23 օր հերոսաբար ետ էր մղում թշնամու բազմակի գրոհները[24]։ Բայազետի կայազորին օգնելու նպատակով Ալեքսանդրապոլի գավառի հայերը հունիսի 6-ին աշխարհազոր կազմակերպեցին։ Նույնպիսի կամավորական աշխարհազորներ էին կազմակերպում նաև Երևանի և Իգդիրի նահանգների հայերը[25]։

Հունիսի 28-ին պաշարված Բայազետի կայազորին և հայ աշխարհազորայիններին օգնության հասավ գեներալ Տեր-Ղուկասովի ջոկատը։ Ջոկատի զինվորներն ու աշխարհազորայինները, քաղաքամերձ գծին դեռ չհասած սկսեցին գնդակոծվել ժայռերի ետևում թաքնված թուրքերի կողմից։ Նրանց այնտեղից դուրս մղելով, զինվորներն ու հայ աշխարհազորայինները գրոհեցին Բայազետը շրջապատող բարձունքները, որոնք նույնպես գրավել էին թուրք զինվորներն ու քրդերը. արյունահեղ կռիվներից հետո թշնամին դուրս քշվեց այդ դիրքերից։ Գլխովին ջախջախված թուրքերը Բայազետից ետ մղվեցին և հերոսական կայազորը, որի կազմում կային նաև հայեր, փրկված էր։

Ամենածանր ու դժվարին մարտերը ռուսական զորամասերն ու հայ կամավորները վարեցին Կարսի բերդի տակ։ Հոկտեմբերի 10-ին գեներալ Լազարևի զորքերն սկսեցին Կարսի պաշարումը։ Բերդում պաշարված թուրքական զորքերն ու քրդական անկանոն զորամասերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին։ Սակայն չդիմանալով ռուսական զորքի և աշխարհազորայինների ճնշմանը, արյունաքամ լինելով, հակառակորդը ստիպված էր զենքը վայր դնել։ Կարսի անկումից հետո ռուսական զորքերը, գրավելով Էրզրումի վիլայեթի զգալի մասը, մարտեր մղելով մոտեցան Էրզրումին և պաշարեցին այն։ 1878 թ. հունվարի վերջին ռուսական Կովկասյան բանակը մտավ Էրզրում։

---

22 Ս. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, Հավելված, էջ 449։

23 С. О. Кишмишев, Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, էջ 127—128։

24 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 309, թ. 10։

25 «Сборник материалов по истории русско-турецкой войны 1877—1878 гг.», вып I, СПб., 1900, էջ 17։

Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում Թուրքիայի կրած պարտությունը հարկադրեց նրան հաշտություն խնդրել (1878 թ. հունվարի 9-ին)։ Ռուսական զորքերը կշարունակեին իրենց հաղթարշավը, եթե Անգլիան և Ավստրո-Հունգարիան չսպառնային Ռուսաստանին նրա դեմ պատերազմ սկսել։ Այս հանգամանքը Ռուսաստանին հարկադրեց Թուրքիայի հետ զինադադար կնքել, իսկ այնուհետև, մարտի 3-ին, կնքվեց Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն Բուլղարիան դառնում էր ինքնավար կախյալ իշխանություն, քրիստոնյա կառավարությամբ և տեղական զորքով[26]։ Կախվածությունը սուլթանական կառավարությունից արտահայտվում էր լոկ Թուրքիային տուրք տալու և արտաքին քաղաքականության հարցերում նրան ենթակա լինելու մեջ։ Բուլղարիայի սահմանները ձգվում էին Դանուբից մինչև Էգեյան ծովը և Սև ծովից մինչև Օխրիդյան լիճը։ Պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն թուրքական զորքերը դուրս էին բերվում Բուլղարիայից, իսկ ռուսական զորքերը մնալու էին երկու տարի։ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ամրապնդում էր Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի անկախությունը, նախատեսում էր խաղաղ ճանապարհով ինքնավարություն տալ (թեև սահմանափակ) Բոսնիային և Հերցեգովինային։ Թուրքական լծից ազատագրվում էր նաև Մակեդոնիան[27]։

Այսպիսով, պայմանագիրը հաստատում էր Բալկանյան թերակղզու մեծ մասի ազատագրումը թուրքական աբյունոտ տիրապետությունից։ Սան-Ստեֆանոյի հաշտության դաշնագրի ստորագրման օրը՝ մարտի 3-ը դարձավ հինգ դար տևած թուրքական լծից Բուլղարիայի ազատագրման օրը, բուլղար ժողովրդի ազգային տոնի օրը։ «1878 թ. մարտի 3-ին,— ասել է Վ. Կոլարովը,— Կոստանդնուպոլսի մատույցներում, Սան-Ստեֆանոյում, կնքվեց... հաշտության պայմանագիր, որի համաձայն Եվրոպական Թուրքիայի ավերակների վրա ստեղծվեց նոր պետություն՝ Բուլղարիան։ Այդ օրն իրավամբ համարվում է թուրքական լծից բուլղար ժողովրդի ազատագրման օրը, քանի որ թուրքական սուլթանների հորդաներն այլևս երբեք ոտք չդրեցին այն տերիտորիան, որն այժմ զբաղեցնում է Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունը»[28]։

Պատերազմի ասիական ռազմաբեմում (Արևմտյան Հայաստանում) ռուսական զենքի տարած հաղթանակը հանգեցրեց այն բանին, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտցվեցին 16-րդ և 19-րդ հոդվածները։ 19-րդ հոդվածով Ռուսաստանին էր անցնում Արևմտյան Հայաստանի մի փոքր մասը՝ Կարսը, Արդահանը, Արդվինը, Բայազետը, Սուրմալուն։ Ռուսաստանին էր անցնում նաև Բաթումը։ Ռուսաստանն իրեն էր վերադարձնում հարավ-արևմտյան Բեսարաբիան։ 16-րդ հոդվածով սահմանվում էր. «Որովհետև ռուսական զորքի՝ Հայաստանում գրաված, բայց Թուրքիային վերադարձվելիք տերիտորիայից հեռանալը կարող է առաջ բերել ընդհարումներ ու բարդու-

---

26 «Освобождение Болгарии от турецкого ига», Сборник документов, т. III, М., 1967, док. № 28, էջ 55։

27 «Вопросы истории», 1953, № 3, էջ 69։

28 «Речь министра В. Коларова по случаю 70-летия освобождения Болгарии», София, 1948, էջ 3։

թյուններ, որոնցից երկու երկրների [Թուրքիայի և Ռուսաստանի] լավ հարաբերությունները կվնասվեն, ուստի Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայաբնակ նահանգներում առանց ուշացնելու իրականացնել տեղական կարիքներից բխող բարվոքումներ ու բարենորոգումներ, և երաշխավորել նրանց [հայերի] ապահովությունը քրդերից ու չերքեզներից»[29]։

Սակայն Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Բալկանյան թերակղզում և տերիտորիալ նվաճումները Արևմտյան Հայաստանում անհանգստացրեցին Անգլիային և Ավստրո-Հունգարիային։ Նրանք դեմ էին Բալկաններում սլավոնական մեծ պետություն ստեղծելուն։ Այդպիսի պետության կազմավորումը՝ կանխելու համար դեռևս 1876 թ. Կոստանդնուպոլսի կոնֆերանսն իր նախագծում նախատեսում էր Բուլղարիան բաժանել երկու մասի միջօրեականի ուղղությամբ. Արևմտյան Բուլղարիան պետք է անցներ Ավստրիայի ազդեցության ոլորտը։ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը կնքելիս Իգնատևը չցանկացավ հաշվի առնել այս նախագիծը։ Նրա ծրագրի և բուլղար ժողովրդի ցանկության համաձայն Բուլղարիան պետք է դառնար միասնական պետություն, որը գրավելու էր Բալկանյան թերակղզու մեծ մասը[30], ինչը և սահմանվում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրով։

Անգլիան և Ավստրո-Հունգարիան, վկայակոչելով Կոստանդնուպոլսի կոնֆերանսի որոշումը, դիվանագիտական ճանապարհով շարունակում էին պահանջել վերանայել նախնական պայմանագիրը։ Ռուսաստանի վրա դիվանագիտական ճնշում գործ դնելուց բացի Անգլիան սկսեց զորամասեր փոխադրել Էգեյան ծովի շրջանը, որպեսզի ուժի դիմի, եթե Ռուսաստանը փորձի իրագործել Սան-Ստեֆանոյի դաշնագրի պայմանները։ Գերմանացի ուսումնասիրող Ալբերտ Շրայները գրել է. «Անգլիան շտապ ռազմական պատրաստություններ էր տեսնում այն դեպքի համար, եթե Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ուժի մեջ մտներ։ Ռուսաստանը նույնն էր անում, բայց ի վերջո նա տեղի տվեց մեծ տերությունների ճնշմանը և համաձայնվեց Ավստրո-Հունգարիայի առաջարկի հետ, ըստ որի ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը պետք է ինտերնացիոնալ կոնգրեսի քննարկման առարկա դառնար։ Ռուսաստանը հարկադրված էր այդ անել, մանավանդ որ Բեռլինը նույնպես օգտագործում էր իր ազդեցությունը Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու համար»[31]։

Մեծ տերությունների համաժողովում նախնական պայմանագրի վերանայմանն Անգլիան հասել էր դեռևս Լոնդոնում կայացած բանակցությունների ժամանակ։ 1878 թ. մայիսի 30-ին Ռուսաստանի լիազոր, Անգլիայում Ռուսաստանի դեսպան կոմս Շուվալովը և Անգլիայի լիազոր, արտաքին գործերի մինիստր Սոլսբերին Լոնդոնում համաձայնագիր ստորագրեցին այն փոփոխությունների մասին, որոնք պետք է մտցվեին Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի մեջ։ Թուրքիային ցույց տված «օգնության» համար Մեծ Բրիտանիան կարողացավ հուլիսի 4-ին սուլթանի հետ գաղտնի համաձայնագիր կնքել, ըստ որի տիրացավ Կիպրոսին և իր պրոտեկտորատը հաստա-

---

29 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, էջ 367։

30 «История дипломатии», т. II, М., 1945, էջ 45—46։

31 Albert Schreiner, Zur Geschichte der Deutschen Aussen Politik 1871—1945, Berlin, 1955, I, էջ 107։

տեց Փոքր Ասիայի վրա։ Կոնգրեսի նախօրյակին Անգլիան համաձայնագիր կնքեց նաև Ավստրո-Հունգարիայի հետ։ Երկու պետությունն էլ վճռեցին թույլ չտալ, որ Բուլղարիան տարածվի Բալկաններից հարավ։ Բացի այդ, Անգլիան պարտավորվում էր պաշտպանել Բոսնիայի և Հերցեգովինայի նկատմամբ Ավստրո-Հունգարիայի ունեցած հավակնությունները։

1878 թ. հունիսի 1-ին բացված Բեռլինի կոնգրեսի աշխատանքների հիմքում ընկած էր «Շուվալով-Սոլսբերի» համաձայնագիրը։ Կոնգրեսին մասնակցում էին Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և Թուրքիայի ներկայացուցիչները։ Բուլղար ժողովրդի ներկայացուցիչներին թույլ չտվեցին կոնգրեսին մասնակցել։ Կոնգրեսին մասնակցելու թույլտվություն չստացան նաև արևմտահայերի ներկայացուցիչները։ Ռուսաստանը մեկուսացված էր։ Նրան դիմագրավում էր արևմտյան տերությունների կոալիցիան Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի գլխավորությամբ։ Կոնգրեսն իր աշխատանքն ավարտեց հուլիսի 1-ին, Բեռլինի դաշնագրի ստորագրությամբ, որի համաձայն Բուլղարիան մասնատվում էր. Հյուսիսային Բուլղարիան Սոֆիայի սանջակի հետ կազմում էր Բուլղարական իշխանությունը, որը Թուրքիային տուրք էր վճարելու, Կենտրոնական Թրակիան դառնում էր սուլթանի գերագույն իշխանության տակ գտնվող ինքնավար մարզ՝ Արևելյան Ռումելիա անվամբ, իսկ Մակեդոնիան և Հարավային Թրակիան մնում էին Թուրքիայի տիրապետության տակ։

Այսպիսով, եվրոպական երկրներին հաջողվեց ժամանակավորապես մասնատել Բուլղարիան և բուլղար ժողովրդին, դրանով դանդաղեցնելով միասնական ազգային պետության ստեղծման ընթացքը։

Սակայն հերոսաբար պայքարող բուլղար ժողովուրդը չհաշտվեց Բեռլինի կոնգրեսի որոշման հետ և շարունակում էր պայքարել Հարավային և Հյուսիսային Բուլղարիայի միավորման, միասնական ազգային պետության ստեղծման համար։ Հարավային բուլղարները զինված դիմադրություն էին ցույց տալիս Բեռլինի դաշնագրի իրագործմանը՝ թուրքական տիրապետությունը վերականգնելուն։ Այդ պայքարում բուլղարներին օգնում էր ժամանակավորապես Բուլղարիայում թողնված ռուսական բանակը։ Ռուսական զորքերի ներկայությունը Հարավային Բուլղարիայում ապահովում էր երկիրը թուրքերի ներխուժումից և թուրքական լծի վերականգնումից։

Ռուսաստանի վարած քաղաքականությունը, որը խանգարում էր Թուրքիային վերականգնել իր արյունոտ տիրապետությունը Հարավային Բուլղարիայում, օբյեկտիվորեն օժանդակում էր երկրի միավորման համար բուլղար ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարին. այդ միավորումն իրականացվեց 1885 թ.։ «Միավորումը հաջողությամբ ավարտելու գործում վճռական դեր խաղաց Ռուսաստանը, որը ոչ միայն հող ստեղծեց դրա համար իր նախորդ քաղաքականությամբ, պաշտպանելով բուլղար ժողովրդի ազգային շահերը Թուրքիայի հավակնություններից և Անգլիայի, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի մեքենայություններից, որոնք ջանում էին տնտեսապես ու քաղաքականապես ստրկացնել Բուլղարիան, վերածելով այն իրենց հումքի աղբյուրի»[32]։

---

32 «История Болгарии», т. I, էջ 477։